

Տարեկան գինը 10 թուրքի, կես տարվանը 6 թուրք. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միջին լատիներենով.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բայի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՆԵՐԱՅՈՒՆ 1894 ԹԻՎԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԱԿՈՒՄ Է՞՞

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 թ., տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 թ., ինն և ութ ամսականը՝ 8 թ., եօթ ամսականը՝ 7 թ., վեց ամսականը՝ 6 թ., հինգ ամսականը՝ 5 թ., չորս ամսականը՝ 4 թ., երեք ամսականը՝ 3 թ., երկու ամսականը՝ 2 թ., ամսական 1 թուրքի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՖԱԳՐԱԿԱՆ: Օտարալեզուները պէտք է գիտեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Սխալմունք է թէ պատրուակ... Երբեք չենք կատարել ինչ-որ մի բան, որը չէր պատրուակում:

ՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԷ ՊԱՏՐՈՒԿ

Մենք արդէն առիթ ունեցանք հաղորդելու, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը Եջմիածնից ստանալով կաթողիկոսական անդամակի կոնգրեսը...

Մինչև այսօր էլ մենք տեղեկութիւն չունենք թէ կաթողիկոսական կոնգրեսը Կ. Պոլսում է թիւրքաց շայտատանի եկեղեցիներում կարգադրվել է թէ չէ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Թ Ո Ւ Յ Ի Կ Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ն

Չեմ կարծում, որ մեր երկրում, մանաւանդ հայրի մէջ, գտնվի մի մարդ, որ չը ցանկանայ հարստանալ: Կամենում են հարստանալ և նրանք, որոնց կենսի միակ նպատակը, բարձրագոյն իղէալը—մամոնան է, և նրանք, որոնք ուրիշ իղէալներ են ունենում, առաջինների համար—մի փոքր նպատակ է, իսկ վերջինների համար—մի շրջ, բայց և այնպէս երկուսն էլ միշտ առում են, չափ, եթէ են միլիոնատէր դառնալիս: Սակայն արի տես, որ կայ մի աշխարհ, որը, ինչպէս ուրիշ շատ բաներում, մերիւնի հակադրականը է կազմում, միլիոնների հարցում ևս գտնադրւում է մեղանից: Ամբիկայի ամենախոշոր միլիոնատէրերից մէկը—Ջակոբ Աստոր, շատ նեղութիւն է քաշում իր հարստութեան երսից և չը գիտէ ինչ անէ, չի փողերը, ասում է նա, ոչ մի ուրախութիւն չեն պատճառում ինձ, ուրիշ մարդիկ զուարճութիւն և հաճոյք են ստանում փողից, բայց իմ կարողութիւնս ինձ միայն ահապին հոգսեր և տըհաճութիւններ է տալիս և ես մի րօպէ հանգստութիւն չունեմ:

Հայոց այժմեան պատրիարք Աշքեան աշխարհաբար է դառնում այդ կոնգրեսը թիւրքաց հայոց եկեղեցիներում կարգադրելու տալու այն հիման վրա, որ այդ կոնգրեսը մէջ բարեմաղթութիւններ չը կան սուլթանի մասին և ոչ էլ յիշխած է սուլթանի անունը:

Կա մի այնպիսի անսպասելի, տարօրինակ պատճառարանութիւն է, որ ձըշմարիտը խոստովանած, մենք նոյն իսկ Աշքեանից չէինք սպասում... Արդեք դա մի սխալմունք է, մի թիւրիմացութիւն է, թէ լոկ պատրուակ:

Պէտք է վերին աստիճանի անտեղեկ և նոյն իսկ անչափ միամիտ լինել կարծելու համար, թէ ամենայն հայոց կաթողիկոսի անդամակի կոնգրեսը մէջ կարող են լինել բարեմաղթութիւններ սուլթանի համար, կամ նրա անուն յիշատակութիւն:

Հայոց կաթողիկոսները, ինչպէս եղել է և բոլոր կաթողիկոսների ժամանակ, ինչպէս եղել է և այս դարում, Թիւրքիայից եկած կաթողիկոսներին ինչպէս օրինակ, Մատթէոսի, Գեորգի օրով—համաձայն եկեղեցական սովորութեան, նստելով հայրապետական դահլը, հրատարակել են օրհնութեան կոնգրեսներ, որոնք և կոչվում են անդամակի կոնգրես, ուղղված բացառապէս հայ-ղուստանայական հօտին, և այդ հօտի գլուխահան դասակարգելով: Լինելով միմիայն հօտին ուղղած օրհնութեան կոնգրես, հեռու որ և է քաղաքական բնուէրութիւնից, կաթողիկոսական կոնգրեսը մէջ, ի հարկէ, չէր կարող լինել թիւրքաց սուլթանի անունը, մանաւանդ որ այդ կոնգրեսը մէջ չը կան նոյն իսկ քրիստոնէայ մի ապետների անունները:

Թէ Աշքեան պատրիարքը և թէ նրա խորհրդատուները լաւ պէտք է իմանան, որ եթէ կաթողիկոսական անդամակի կոնգրեսը մէջ խօսք լինել օգոստափառ անձանց մասին, այն ժամանակ ամենից առաջ և ամենից զլլաւոր տեղը պէտք է տրվէր Նորին Մեծնութիւն Թագաւոր կայսրին, քանի որ աթոռանիստ Եջմիածնի գտնվում է առևտայ պետութեան սահմաններում, և վայելում է առևտայ կառավարութեան հովանաւորութիւնը:

Սակայն քանի որ կաթողիկոսական կոնգրեսը մէջ չեն յիշատակվում ոչ Թագաւոր կայսրի և ուրիշ վիճակների անունները, որոնց իշխանութեան ներքոյ ևս

գտնվում են Եջմիածնի իրաւասութեան ենթարկվող թեմեր, ուրեմն ի՞նչից դըրքված, ի՞նչ հիման վրա և ի՞նչ պատճառով այդ կոնգրեսը մէջ առանձին բարեմաղթութիւններ պէտք է լինէին թիւրքաց սուլթանի մասին, կամ յիշատակութիւն նրա անունը:

Բացի դրանից, անդամակի կոնգրեսը մէջ սուլթանի հասցէին բարեմաղթութիւններ չանելը և նրա անուն չը յիշատակելը, ոչ ոքի, ուրեմն և Աշքեան պատրիարքին իրաւունք չէ տալիս մտքով անգամ անցկացնելու, թէ դա մի անուշադրութիւն է դէպի սուլթանի անձնաւորութիւնը, քանի որ օրհնութեան կոնգրակի լոկ եկեղեցու հօտին նուիրված մի պաշտօնական գրուածքի մէջ ոչինչ առիթ չը կայ յիշատակելու միապետի անունը:

Միթէ վերջապէս մոռացել են Աշքեան պատրիարք և նրա խորհրդականները, որ նոյն հայոց կաթողիկոսը նախ քան երուսաղէմից ձանապարհ ընկնելը, երբ գտնվում էր թիւրքաց հողի վրա, իր պարզը համարեց, ամենաողորմած խօսքերով, յայտնելու իր յարգանքները սուլթանի անձին և նրա կառավարութեան հեռադրով իմանալով որ Կ. Պոլսով չէ անցնելու, և ուրեմն միջոց չէ ունենալու, իբրև երեք միլիոն թիւրքահայերի կաթողիկոս, ներկայանալու սուլթանին:

Ահա հիմնվելով այդ բոլոր վրա, նայելով հայցին միանգամայն անկողմնապահ կերպով մենք կարծում ենք, որ Աշքեան պատրիարք և նրա խորհրդականները այնքան միամիտ, այնքան անտեղեկ և այնքան մոռացկոտ չեն, որպէս զի կարելի լինէր մի սխալմունք համարել դրանց արած այդ անտեղի քայլը:

Այդ ուրեմն հաստատապէս կարելի է ասել, որ դա մի պատրուակ է չը կարողանալ կաթողիկոսական կոնգրեսը Կ. Պոլսում և թիւրքաց շայտատանում մոռանալով որ Եջմիածնի կաթողիկոսը ամենայն հայոց կաթողիկոս է, ուրեմն և թիւրքաց հայոց կաթողիկոս:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ՆՊԱՍՏ

Մեր երկրի մշակութային գաւառներին օգնելու և գլխաւորապէս սերմացու տալու խնդիրը, ինչպէս

գաղանկը 25 հազար լիւրայով, իսկ Ժիրար մեռած թախառական, աղքատութեան մէջ, երբ նրա մեղքները շատերին միլիոնատէր էին դարձնում:

Նոյնպէս թշուառութեան մէջ մեռած շոգենաւի հնարող Ֆուլտոնը և յուսահատութիւնից խելազարվեց: իսկ շոգենաւը քանիտներին հարստացրեց: Հռչակաւոր միլիոնատէր վանդերբիլը շոգենաւից հարստացաւ. նա մեռած 70 տարեկան համարում էր մի միլիոն դոլար, 2 միլիոն ռուբլի: Ներկայումս նրա ժառանգներին հարստութիւնը այնքան է, որ իրանց տարեկան եկատուութիւնը համար միայն վճարում են 600,000 դոլար պետական հարկ:

1859 թ. մի աղքատ ամերիկացի, Կրէկ անունով Պենսիլվանիայում գտնում է նախալին ֆօնտաններ, որոնք բազմաթիւ հարստութիւնների հիմք են դնում: Այժմեան նախալին թագաւոր—Ջոն Բոկաֆէլէր հարկը միլիոն դոլար կարողութիւն ունի:

1890 թ. Ամերիկայում հրատարակվել է միլիոնատէրերի ցուցակը, որի մէջ մտել են միայն նըրանք, որոնք տասը միլիոն ռուբլուց աւելի կարողութիւն ունեն: Բոլոր միլիոնատէրերի թիւը 122 է. նրանց կարողութեան համագումարը 1,552,000,000 դոլար է, կամ երեք միլիարդ ռուբլի: Նրանց

յայտնի է, մի քանի ժամանակից ի վեր արդէն վարչական շրջաններում խօսակցութեան նիւթ էր դարձել: Այժմ, ինչպէս երևում է Պետերբուրգից եկած տեղեկութիւններից, այդ կարևոր խնդիրը համարեա իրականութիւն է ստացել:

Ահա ինչ ենք կարդում Պետերբուրգի լրագիրներում: «Կովկասի կառավարչապետ գեներալ-ադյուտանտ Գերեմէտեվ միջնորդեց ներքին գործերի մինիստրութեան առաջ փոխ տալ կարսի շրջանին 152,000 ռուբլի ժողովրդին հաց մատակարարելու համար: Ներքին գործերի մինիստրութիւնը կատարեալ համակրութեամբ վերաբերվելով այդ միջնորդութեանը, համաձայնութիւն կայացրեց Ֆինանսների մինիստրութեան հետ՝ կարսի շրջանին տալու այդ փոխառութիւնը:»

Այսպէս ուրեմն, հիմք կայ կարծելու, որ կարսի նահանգը, որին և տրվում է այդ 152,000 ռուբլու փոխառութիւնը, կունենայ զարնանայանի համար սերմացու և նոյն իսկ հարկաւոր տեղերում՝ ուտելու հաց:

Անկասկած նոյն նպատակ էր տրվի և Երևանի նահանգը մշակութային, ինչպէս են՝ Նոր-Բայազետի, Կարախիւսի և Ալեքսանդրօպոլի կողմերը, որոնց նոյնպէս պակասութիւն կայ թէ սերմացու և թէ հացի:

Հաստատապէս արդէն յայտնի է, որ տեղական իշխանութիւնը ձեռնարկել է սերմացու ձեռք բերելու գործին, և նոյն իսկ դիմում է եղել կովկասեան Գերադատեսական ընկերութեան ջննելու այն սերմացուները, որ մտադրութիւն կայ ձեռք բերելու. (այդ խնդրի մասին «Մշակի» մէջ արդէն առիթ ունեցանք մի քանի անգամ գրելու):

Յոյս ունենք, որ այդպիսով մեր գերադասների տնտեսութեան այդ ամենակարևոր խնդիրներից մինը՝ այն է ցանկու համար սերմացու ունենալը՝ ամենայնպէս լուծում կը ստանայ և գերադասները հանգիստ հոգով կը ձեռնարկեն իրանց զարնանային աշխատանքներին:

ՄԻ ՀԱՐՑ

Մեր խմբագրութեան մէջ Բազուից ստացվել է մի նամակ, որը պարտք է դնում մեզ վրա՝ մի քանի խօսք ստելու:

Այդ նամակը գրված է Շամախու գաւառի Ղալազեա գիւղի մի քանի բնակիչների կողմից:

Մէջ երկուսը 125-ական միլիոն ունեն, մինը—100 միլիոն, մինը 80, 75, 40 և 35-ական միլիոն, հինգը—30-ական միլիոն և չորսը 25-ական միլիոն:

Այդ միլիոնատէրերի մէջ թէ և կան այնպիսիները, որոնք չը գիտեն ինչ անեն իրանց միլիոնների հետ, կան սակայն և այնպիսի միլիոնատէր ժլատներ, որոնք ուտում են միայն պանիր և հաց, ինչպէս Բուսսէլ Սալ միլիոնատէրը, որն իր ծառային արտաքսեց նրա համար, որ նա փոխանակ 10 կոպեկի, 15 կոպեկ էր վճարել պանիր համար:

Բայց ամերիկական միլիոնատէրերի մէջ կան և առատաձեռն բարեգործներ, որոնք ահագին նուէրներ են անում զանազան բարեգործական նպատակներով, թէ և նրանց բարեգործութիւնները ամերիկացիների բարոյական գաղափարների վրա շատ մշտակար ազդեցութիւն են գործում: Բայց նրանում է, որ զանազան կեղտոտ և անաղնիւ միջոցներով հարստացած միլիոնատէր իր ահագին հարստութեան մի չնչին մասը նուիրում է հեթանոսների քրիստոնէութեան դարձնելու կամ դպրոցներ, աղքատանցներ հիմնելու նպատակով, որպէս զի իր կեղտոտ և շատ ընտանիքների կործանումն պատճառով ձեռնարկութիւններից վրդովված հասարակական կարծիքը խաղաղացնէ: Օրինակ, վերոյիշեալ Բոկաֆէլէր, որ ամերիկա-

որոնք զինուելով Բագու, նկարագրում են իրանց նեղ վիճակը, զանգառովելով որ շատերը ուտելու հաց չունեն, ապրանքի համար խոտ չունեն, և օգնութիւն են խնդրում...

Այդ այն Ղալազեան գիւղն է, որ անցեալ տարի հրդեհի զոհ դարձաւ: Սարսափելի կրակը լափեց գիւղացիներին շատերի ունեցած չունեցածը, հրկիւղեալները մնացին անտուն, անօգնական, յետին աղքատութեան մէջ:

Թշուառ հրկիւղեալների դժբաղդութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց, — անմիջապէս Բագուում կազմակերպվեց մի մասնաժողով, որը սկսեց հանգանակութիւններ ընդունել: Կարճ միջոցում մասնաժողովը հաւաքեց մօտ 3,000 ռուբլի փող և 40 պուշ զգեստ, և ուղարկեց իր անդամներին ձեռքով, գիւղացիներին բաժանելու:

Բացի դրանից, ուրիշ քաղաքներում էլ սկսվեցին հանգանակութիւններ. մեր խմբագրութեան մէջ էլ, — թէև մենք այդ նպատակով փող չէինք հաւաքում, — ստացվեցին մի քանի փողերի գումար, որ անմիջապէս հասցրինք Բագուի մասնաժողովին: Նոյն իսկ էջմիածնի հողերը իշխանութիւնը առաջարկեց՝ թիֆլիսում հանգանակութիւններ անել յօղուտ Ղալազեայի հրկիւղեալներին... Մի մեծ հանգանակութիւն էլ եղաւ Մօսկվայի մի խումբ վաճառականների մէջ, որոնց հաւաքած մօտաւորապէս 2,000 ռուբլի գումարը, եղբ. Չամհարեանների միջոցով ուղարկվեց թիֆլիս, «Արձագանքի» խմբագիր Աբգար Յովհաննիսեանին՝ ուր հարկն է հասցնելու համար:

Մինչև այժմ այդ բոլոր գումարների գործադրութեան մասին հարկ ոչ մի տեղ չենք տեսել և չենք կարդացել «Արձագանքի» խմբագրութիւնը այնքան միայն յայտնեց, որ իր ստացած գումարից 1,000 ռուբլի մի թղթակցի ձեռքով ուղարկել է Ղալազեան բաժանելու:

Այժմ, երբ հրկիւղեալ գիւղացիները, ձմեռվայ ցրտերին, շատերը հաց չունենալով և ոչ էլ ապրանքի համար խոտ, գիւտումներ են անում, օգնութիւն խնդրելով, մենք մեր պարտքն ենք համարում, յանուն այդ աղքատ գիւղացիներին, յանուն այն շահկցութեան, որ ցոյց տուեց հասարակութիւնը՝ նուէրներ անելով, հրապարակով հարց առաջարկել — ուր մնացին հաւաքված փողերը, ու՞մ ձեռքումն են գտնուում. ինչու մինչև այժմ նպատակին չեն ծառայել...

Կրկնում ենք ուր մնացին այդ փողերը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 20-ին «Մշակի» № 15-ի մէջ տպված թիֆլիսի հայկաթօլիկների եկեղեցական խնդրին վերաբերեալ իմ յօդուածի մասին պ. Բէրտրեանի արած նկատողութիւնները ճիշդ չեն, և ինչպէս երևում է, նա բոլորովին տեղեկ չէ այդ գործին: Նա ասում է, թէ թիֆլիսի հայկաթօլիկների այժմեան եկեղեցին ես սխալմամբ կամ անգիտութեամբ ցոյց եմ տալիս կապուցիներին միաբնութեան շինած, այն ինչ նա հայ ունիթօուներին

կան ամենանախատելի մենավաճառութիւններին մինչ-նաւթային սինդիկատի — տէրն է, մի մենավաճառութիւն, որ ամբողջ երկրի կործանման պատճառ է դառնում, հիմնել է Չիկագոյում մի համալսարան և դրա համար նուիրել է 125 միլիոն դոլար կամ 250 միլիոն ռուբլի: Բայց այդ մի ամենաչնչին մասն է այն հարստութեան, որ նա դիզել է շատ քաղաքների, հասարակութիւնների և ընտանիքների կործանման գնով: Նա խկապէս մի շահաւոր — խարդախ է, բայց վարձկան լրագիրները նրան հուշակցին բարձր կրթութեան մեկնեալ Ամերիկացի այդ խարդախը հակայական տրպարն է մեր հայերի մէջ նոյնպէս հուշակաւոր սուտ բարերարների, որոնք հարստանալով զանազան կեղտոտ միջոցներով, վերջը այս կամ այն եկեղեցուն, զարդրին նուէրներ են անում և դրանով իբր թէ հողիններ վերկում և բարեգործի անուն ժառանգում, եւ, ի հարկէ, հացկատակ մամուլը խոսել է ծիւղում նրանց առաջ և շատ անգամ դեռ առաջարկում է արձան կանգնեցնել:

Չը մտանա՞ք յիշել հարստութեան և մի ուրիշ աղբիւր — լրագրութիւնը: Լրագրական ասպարեզում առաջին միլիոնատէրը «Times» լրագիրն է: Նրա հիմնադիրը Ջոն Վալտեր հիմնեց այդ օրագիրը 1786 թ.ին, չունենալով համարեա ոչինչ, իսկ որդին արդէն համարվում էր լրագրական թագա-

չնաճն է, որը և ինքն 1888 թ.ին «Մշակի» № 24—29 մէջ ապացուցել է պատմական փաստերով: Բայց այդպէս չէ: Ունիթօուների շինած և պ. Բէրտրեանի պատմական փաստերով ապացուցած եկեղեցին այժմ գոյութիւն չունի. նա այժմ մասնաւոր մարդու սեփականութիւն է և դարձել է «Նաղբոք» ընկերութեան ապրանքների պահեստ: Մեր ասած եկեղեցին նոր է շինած, ուստաց տիրապետութեան ժամանակ 1804 թ.ին, իսկ ունիթօուները Վրաստանից հեռացել են 1600 թ.ին, կաթօլիկների հողերը գործերը յանձնելով կապուցի միաբաններին:

Մինչև այժմ հայկաթօլիկների եկեղեցական խնդրի մասին «Մշակի» մէջ տպված մեր յօդուածները հիմնել ենք ոչ պատմութեան և ոչ աւանդութեան վրա, այլ զուտ պաշտօնական աղբիւրներից քաղած տեղեկութիւնների վրա: Անս թէ ինչ են ցոյց տալիս պաշտօնական տեղեկութիւնները. — 1393 թ.ից մինչև 1600 թ.ը հայկաթօլիկները թիֆլիսում ունեցել են կայսկոպոսական աթոռ (ունիթօուներն են սրանք): Իսկ այդ թ.ից նրանց փոխարինում են կապուցիները, որոնք և հայկաթօլիկների հողերը գործերը կառավարում են մինչև 1844 թ.ը: 1755 թ.ին վրաց թէմուրազ թագաւորը իր երկրից արտաքսելով կապուցիները միաբաններին՝ նրանց եկեղեցին (ունիթօուները շինածը) դարձնում է ուղղափառ տաճար: Հինգ տարուց յետոյ վերադառնում են կապուցիները կրկին Վրաստան, բայց այլ են եկեղեցին յետ չեն առնում և ժամապետութիւնը կատարում են մի մասնաւոր տան մէջ, ուր գտնուում է այժմեան եկեղեցին, որը շինված է 1804 թ.ին: Այդ նոյն թ.ին հին եկեղեցուց վերջվեց գմբէթը, իսկ 1844 թ.ին նա ծախվեց մասնաւոր մարդու վրա: 1844 թ.ին կապուցիներին կրկին հեռացրին Անդրկովկասից, իսկ կաթօլիկների հողերը գործերը կառավարելու համար կոմիտատ հաստատվեց վիլիատատութիւն, ենթարկելով նրան Տիրասպօլի լատին կայսկոպոսի իշխանութեան: («Кавказск. Кал. 1885 г. ст. 67»):

Ան և մի այլ ապացուց: Ռուսները Վրաստանի տիրելուն պէս, կապուցիներ միաբաններին զբնակարդ պատէր Բուտիլիանօ դիմում է զենեքաւելչարնանս կնօրինգին հետեւել ինդրագրով. — 1755 թ.ին վրաց Անտօն կաթօլիկոսի պատճառով, որը իբր թէ կանցնել է ընդունել կաթօլիկութիւն, Վրաստանում տեղի ունեցած խառնակութեան ժամանակ, կաթօլիկներից վրացիք լելել են թէ թիֆլիսի և Գօրա եկեղեցիները և թէ նրանց անչարժ կայքերը: Կաթօլիկները այժմ ստիպված աղօթում են մասնաւոր տների մէջ: Վրաց թագաւորները թէև շատ անգամ խոստացել են վերադարձնել այդ եկեղեցիները՝ Գօրունը և թիֆլիսիցը, որոնք շինված են 1735 թ.ին, պատէր Նիկողայոսի (ունիթօու) օրով, բայց մինչև այժմ չեն վերադարձրել, և այն, և այն: Այդ խնդրագիրը կնօրինից ներկայացնում է իշխան կուրապիւնի, որը առաջարկում է կնօրինգին տեղեկացնել իրան, թէ Վրաստանում ո՞րքան կաթօլիկներ կան, ինչ աղօթվեան են պատկանում նրանք և

որ և շատ միլիոնների կարողութեան տէր էր: Պարիզի «Petit Journal»-ը տարեկան 2 միլիոն ֆրանկ եկամտաւ ունի: Ամերիկայում՝ լրագրական միլիոնատէրերի շարքում առաջին տեղն են ընդունում երկուսը՝ «New-York-Herald» և «World»-ի հրատարակիչները: Առաջինի հիմնադիրը՝ Բէննէտ, 1835 թ.ին սկսելով գործը, գրգայում ունէր միայն 300 դոլար: Նա ինքն և հրատարակիչ էր և խմբագիր, և տպարար, դրաշար և ցրվիչ, բայց 1840 թ.ին նա արդէն ունէր 50,000 բաժանորդ և նա իր գործը այնքան ընդարձակեց, որ իր սեփական ծովային հեռագրական թիւ ունեցաւ Եւրօպայում, սկսեց սեփական գիտնական արշաւանքներ կազմել, օրինակ, Ստեյնլիին ուղարկեց Աֆրիկա և այժմ նրա հիմնած լրագիրը բերում է տարեկան զուտ արդիւնք մի միլիոն ռուբլի: Ի հարկէ, կի՞ր լաւ ուսումնասիրելու լինե՞ք, կր տեսնե՞ք, որ արտասահմանեան հարստութիւնների հրատարակիչների այդ անգին եկամտունքի աղբիւրը շատ անգամ շատ պզտոր է լինում — կաշառակերութիւն, ընկաւած, շանտա՞ծ, մի խօսքով այն ամենը, որին ֆրանսիացիները «publicité» միանիւտ անուան տակ վարդաբուրում են:

Այժմ հետաքրքրական է մի հարց, արդե՞ք հարստութիւնների ամենան հետ միասին աճում է և բարեգործութիւնը, բուն, իսկական բար-

ինչպէս է տարածվել այդ երկրում կաթօլիկ կրօնը: Կնօրինից տեղեկացնում է իշխան կուրապիւնի, թէ՛ պատէր Բուտիլիանօի ասելով, թիֆլիսում գտնուում են կաթօլիկներ 300 ընտանիք և Գօրում՝ 200 ընտանիք, որոնք զինաւորապէս պատկանում են հայ ազգութեան. կան մասսաբ և թիֆլիսի շրջակայ գիւղերում, որոնց թիւը յայտնի չէ. դրանք ընդունել են կաթօլիկութիւն թիւրքայից Վրաստան գաղթելուց յետոյ: (Վրացի կաթօլիկներ գոյութեան մասին բառ անգամ չը կայ): Պէտք է աւելացնել, որ ինչպէս երևում է, կաթօլիկները Վրաստանում առաջ շատ են եղել, նրանցից շատերը թէ վերադարձել են իրանց մայրենի եկեղեցու գիրկը և թէ ստիպված ընդունել են ուղղափառութիւն: Վրաց զգացմունքները չը վերաբերելու համար՝ կառավարութիւնը վրձնեց, որ թիֆլիսի և Գօրու կաթօլիկ եկեղեցիները մնան ուղղափառ եկեղեցիներ վրաց ձեռքում, իսկ կաթօլիկները 1804 թ.ին շինում են այժմեան եկեղեցին, հին եկեղեցու դիմաց, ս. Աստուածածին անունով: (Акты Кавказск. Археогр. Комит. т. I и т. II):

Այս բոլորից արդէն պարզ երևում է, որ պ. Բէրտրեան 1804 թ.ին կապուցիներ միաբանութեան շինած եկեղեցին ընդունում է այժմ գոյութիւն չունեցող 1375 թ.ին ունիթօուները շինած եկեղեցու տեղ, որը այժմ «Նաղբոք» ընկերութեան ապրանքի պահեստն է: Ռուսին ճիշդ մեր ասածն է, և ոչ թէ նրա պատմական փաստերով ապացուցածը:

Հայ-կաթօլիկ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 28-ին Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը պատիւ ունի ինչպէս յարգելի խմբագրութեանը հրատարակել հետեւեալը:

Ամսիս 20-ին թիֆլիսում կայացած կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան կենտրոնական ընդհանուր ժողովը պարտաւորութիւն է դրել խորհուրդի վրա՝ ստանալ այն բոլոր նուէրները, որոնք կը յանձնվեն խորհուրդի նպատակին և կարգի նահանգների կարօտեալների և նուէրները բաժանել ըստ իր հայեցողութեան:

Խորհուրդը արդէն ստացած լինելով այդ նպատակով 711 ռ. նուէր և 50 պուշ ցորեն (մասնաւորապէս հաշի կը տպագրվի առանձին), պարտաւորութիւն է համարում շնորհակալութիւն յայտնել նուիրատուներին, կցելով, որ այդ գումարից 500 ռ. և 50 պ. ցորեն ուղարկված են արդէն ընկերութեան Նոր-Բայազետի ճիւղը տեղական վարչութեան կարօտեալներին հասցնելու համար և այսուհետև ես կը շարունակեմ հասցնել, ուր որ կարեւորութիւն կայ, թէ մնացորդ գումարը և թէ այն նուէրները, որոնք կը մտնեն խորհուրդի վիճակի նպատակով:

Նախագահ՝ Ա. Անանեան
Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Բայազետ, փետրվարի 20-ին Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան Նոր-Բայազետի ճիւղը ստացաւ խմբագրութեանը ձեռքով յանձնարար 29-ին, վարչութեան անունով ուղարկած 34 ռուբլի՝ յօղուտ կարօտեալների, որը և յանձնեցինք կարօտեալներին օգնելու համար քաղաքում կազմված յանձնաժողովին՝ խնդրելով գործողը նպատակին համաձայն Այս մասին յայտնելով խմբագրութեանը ի միամտութիւն, ընդ սմին յայտնում ենք մեր և յիշեալ յանձնաժողովի կողմից խորին շնորհակալութիւն, ինչպէս այդ գումարը հանգանակող պարտններին և նուիրատու անձանց (տես «Մշակ» № 11), նոյնպէս և «Մշակի» խմբագրութեան, որ ժողովրդական աղէտների ժամանակ միշտ աշխատել է օգնել և միլիթարի ամբոխի տառապող մասին:

Անդամ վարչութեան՝ Խ. Բուսիպիսեանց
Գործակար՝ Գ. Բատիկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Շարաթ օր, փետրվարի 26-ին, Թագաւոր կայսրի ծննդեան օրվայ առիթով, վաղ առաւօտանից քաղաքը զարդարվեց դրօշակներով: Առաջին կշատական գիմնադրային եկեղեցում, պատարագից յետոյ, մաղթանք կատարեց կղզարը ամբողջ հոգեւորականութեան հետ միասին, մաղթելով կրկար կենալ Թագաւոր կայսրին, Թագուհի կայսրուհուն, Թագաւորանոջ Յետերմիլին և ամբողջ Թագաւորական Տանը: Մաղթանքին ներկայ էին կառավարչապետի օգնական կոմս Տաթևչէկը, բոլոր զինեալները, և քաղաքացիական ու հասարակական հիմնադրութիւնների ներկայացուցիչները: Այդ նոյն օրը, վանքի մայր եկեղեցում Սուրբնեանց եպիսկոպոսը, ամբողջ հայ հոգեւորակալութեան հետ միասին, մաղթանք կատարեց, բաժնեաղթելով երկար կենալ Թագաւորին և ամբողջ Թագաւորական Տանը: Եկեղեցին լի էր ժողովրդով: Մաղթանքներ կատարվեցին կաթօլիկ և բողոքական եկեղեցիներում, մասնաւորապէս մղդկիներում ու Տրէական սինագոգներում:

Ենդ հաղորդում են, որ Երևանի նահանգապետի թոյլութեամբ այդ քաղաքում հանգանակութիւն է սկսված աղքատներին և կարօտեալներին օգնելու համար:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց «Արարատ» ամսագրի փետրվարի տեսարանը: Բովանդակութեան մասին կարող ենք այն ասել, ինչ որ մի ժամանակ հանուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոս Ավագովսկին գրել էր «Փորձ» հանդէսի մասին — «Ժողովածու պիտանի և անպիտան գիտեկեաց»: Չենք կարծում, որ այդ ուղղութեամբ «Արարատը» կարողանայ աչողութիւն գտնել: Նախկին «Արարատը», կի՞ր աղքատ էր բովանդակութեան կողմից, գէ՞ր նա ունէր մի բաժին, որ ամենակարեւորն էր ծախում: Եթէ Մօսկվայի և եւրօպական գլխաւոր քաղաքների բարեգործութիւնը համամատուց լինե՞ք, կը տեսնե՞ք, որ Մօսկվան ծախում է 4,6 միլիոն ռ. Պետերբուրգը — 5,2 միլ. Վիեննան — 5,3 միլ. Բեռլինը — 5,8 միլ. Պարիզը — 12,7 միլիոն: Բնակիչները թիւ վրա հաշուելով ամեն մի մարդու վրա բարեգործական ծախք ընկնում է Մօսկվայում — 5,8 ռուբլի, Պետերբուրգում — 6 ռ., Վիեննայում — 5,3 ռ., Բեռլինում — 4,2 ռ. և Պարիզում — 5,5 ռ.:

Իսկ մեր թիֆլիսում, կը հարցնեն գուցէ ընթացողները: Իսկ մեր հայ հասարակութիւնը, կաւեղացիներ և մենք: Մի գաղափար տարու համար, վեր առնենք կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան 1892 և 93 թ. հաշիւները: Թիֆլիսում աղքատների վրա ընկերութիւնը ծախել է 1892 թ. 165 ռ. և 1893 թ. 228 ռ., իսկ իր 19 ճիւղերով հանդերձ, 886 և 2006 ռ. 25 կ.: Քսան քաղաքի աղքատութեան բիւզժեան եղել է երկու տարվայ ընթացքում 2892 ռ.: Արպիսի պերճախօս ապացոյց մեր առաջադիմութեան, ճշմարիտ և ազգերին կը յուսալարեմք կը:

Պարիզը իւրաքանչիւր տարի բարեգործութեան վրա ծախում է 100 միլիոն ֆրանկ, Մօսկվան 7 միլիոն ռուբլի, իսկ Թիֆլիսը 7000 ռ., մեզայ 700 ռուբլի...

էր և ամենանախապարհակա՞նք, մանաւանդ որ այդ բաժինը պարտաւորական է, այն է պաշտօնական մասը, որի մէջ հաղորդուած էին սինդիկատային կարգադրութիւնները, դանաղան կարեւոր եկեղեցական, ամուսնական և դպրոցական լուրերը: Եւ ճշմարիտ, ինչպէս կարելի է հրատարակել հայ եկեղեցու միակ օրգանը, առանց պաշտօնական բաժնի: Յոյս ունենք, որ դռնէ յաջորդ համարից այդ բաժնի հրատարակութիւնը կը վերականգնուի:

Ըստ մեր, թէ ամսիս 6-ին, կիրակի օրը, լինելու է Տափի թաղի Քանդակահանքի եկեղեցու ծխականների ժողով, մասնակցութեամբ հրաւիրված ճարտարագետներ և նախագահութեամբ թեմական առաջնորդի ժողովը պէտք է քննէ եկեղեցու վերանորոգութեան արդէն պատրաստած մակարդակը և ծախսի նախահաշիւը:

Փետրվարի 24-ին Ներսիսեան դպրոցը տօնեց Վարդանանց տօնը՝ մի անշուք և անշնորհ հանդէսով:

Կիրակի, փետրվարի 27-ին, կայացաւ Գիւղատնտեսական ընկերութեան տարեկան հանդիսաւոր նիստը: Պատուաւոր նախագահ այդ օրվայ համար հրաւիրված էր պ. Յ. Խատիսեանը: Ներկայ էին նիստին կառավարչապետի օգնական կոմս Տատիշչևի, բազմաթիւ անդամներ և հիւրեր: Դասված դարգարված էր կանաչով: Ընկերութեան քարտուղարը կարգաց 1892 և 1893 թվերի հաշիւները, իսկ պ. պ. Տիմոֆեևի, Տարատիսով և Փիրալեան կարգացին գիտնական զեկուցումներ: Նիստը վերջացաւ խորհրդի երկու անդամի և մի գանձապահի ընտրութեամբ: Խորհրդի անդամներ ընտրվեցին իշխաններ՝ Անդրեօնիով, Վախկանով և գանձապահ՝ Եւանգելիս:

Փետրվարի 26-ին, շաբաթ օր, վանքի մայր եկեղեցու կարգացվեց կաթողիկոսական կոնգրակը՝ Գէորգ եպիսկոպոս Սուրենեանցին թիֆլիսի թեմի առաջնորդ նշանակելու մասին:

«Արձագանքի» փառաբանած և գոված մանկավարժներ և հայկաբաններ թվին աւելացաւ էլի մի նոր անուն.— դա է պաշտօնավոր փոքր-գիտապետ Նվան Անդրեիչ Քալանթարով, որի անունը պիտի ստեղծագործութիւնը վարդաբեր է «Արձագանք»-ը: Վերջին համարը, և որի հասցէին Բրուսայի այլ և Երզնկայի պատգամաւորը շուտով է իր թամբաբայական գովեստների ամբողջ պաշարը... Միայն մի հանգամանք մեծ վիշտ է պատճառուած մեզ.— ինչ գաղափար պիտի կազմեն շուշեցիք «Արձագանքի», նրա գոված դպրոցի, փառաբանած հայկաբաններ և մեծացրած մանկավարժներ մասին, եթէ դրանց մէջ առաջիններից մինն է՝ Նվան Անդրեիչ Քալանթարովը:

Շաբաթ, փետրվարի 26-ին, թիֆլիսի ժողովարանում, մեր քաղաքում գոյութիւն ունեցող մի ճիշտ ճաշարանի օգտին տրվեց մի կօնցիտ, որին մասնակցուած էին օր. Պատգայան, օր. Բարսեղյան, պ. պ. Վասիլիով և Շախապիւն: Օր. Պատգայանը հիացրեց հասարակութիւնը իր գեղեցիկ երգով, իր մշակված բարձր ձայնով: Օր. Բարսեղյանը, որ առաջին անգամ է հանդէս դուրս գալիս իբրև շաշարանի վրա անող, վատ յոյսեր չէ տալիս: Պ. Վասիլիովը գիտէ իր շուքի վրա մաքուր ձայներ հանել, բայց չէ տալիս անողջացրած պիէս. պ. Շախապիւնը երգեց երկու երգ: Հասարակութիւնը ծափահարութիւններով վարձաբերեց բոլորին, մանաւանդ շնորհալի օր. Պատգայանին, որը վերջին անգամ երգեց հրաշալի կերպով Բուրնաշեյնի «Կիւրեք»: Կօնցիտից յետոյ սկսվեցին պարերը: Երեկոյթի կառավարչուհին էր տիկին Կոնստանտինը: Դասված լի էր հանդիսականներով:

Յօգուտ Գրիգոր Արժուուտ արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Խարկովից, Գէորգ Լազարեանի միջոցով, Խարկովի հայ ուսանողների մէջ հանգանակած 31 րուբլի, 2) Աշտարակից, Յովհաննէս Փարուսեանից, ընկերական շքանուած հանգանակած, 20 րուբլի: Ուրեմն նախկին 2341 րուբլի 16 կօպէկի հետ այժմ ունենք 2392 րուբլի 16 կօպէկ:

Բաֆայէլ Պատկանեանի «Հիմի էլ լուենք» բանաստեղծութեան թարգմանութիւնը տպագրված է

«Вѣстникъ Европы» ամսագրի փետրվարի համարում: Թարգմանութիւնը կատարել է խոր վեպուստիկ իսկ «Артистъ» հանդիս յունկարի տետրակում տպված է, դարձեալ նոյն վեպուստիկ թարգմանութեամբ, Սերատ Շահադիպի «Իմ վիճակը» ոտանաւորը: Երկու թարգմանութիւններն էլ շատ աջողված են և հաճաքով են կարդացվում:

Մեր լրագրի № 21-ի մէջ պատասխանելով մեր թղթակիցներին՝ ասեցինք, որ շատ թղթակցութիւններ և յօդուածներ չեն տպագրվում դանաղան պատճառներով՝ անկախ նրանց գրական արժանաւորութիւնից: Այդ լուրի մէջ մի մեծ սխալ է մտել, որ բոլորովին փոխուած է լուրի միտքը: Խօսքը վերաբերում է ոչ թէ այնպիսի գրուածքներին, որոնք ժամանակակից մեծ հետաքրքրութիւն չունեն, ինչպէս տպված էր, այլ ընդհանրապէս, այնպիսի թղթակցութիւններին և լուրերին, որոնք ժամանակակից մեծ հետաքրքրութիւն ունեն:

Բազու քաղաքում, ինչպէս հաղորդուած է «Kacmim» լրագրը, պրօզիմապոէզի ուսուցիչ Նարիմանովը ձեռքով կը հիմնի մի ժողովրդական ընթերցարան, որտեղ պէտք է ստացվեն զլուստրուպէս տեղական լեզուներով տպագրված աշխատութիւններ և լրագրիներ, ի հարկէ և ուսանողներին ի նկատի ունենալով, որ Բազուի ազգայնական մեծամասնութիւնը կազմուած է հայեր և թուրքեր, այդ տեսակ մի հաստատութիւն, ի հարկէ, արժանի է կատարել համակրութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Նիւ-Եորկից գրում են «Հայրենիք» լրագրին հետեւալը. «Գրեթէ տասն և հինգ տարի է վեր թիւրքերի գաւառներէն և մասամբ Կ. Պօլսէն գաղթականութեան հոսանք մը սկսած է թափել զէպի Ամերիկա: Գաղթողները մեծ մասամբ հայ են և ցրված են Միացեալ-Նահանգներու այլ և այլ նահանգներ, փոքր մաս մըն ալ Հարաւային Ամերիկայի Պրազիլիոյ նեւսերը: Ամերիկա հայ գաղթականութեան կերպին եղած են Նիւ-Եորկը, Պոսթօն, Շիքախո, Տիլամոնթիլա, Ուսթըր և այլ քաղաքներ: Գաղթողները մասնաւորապէս կարեւոր կեզրուն մը եղած է հայ գաղթականներուն համար:

«Պոսթօն» հայ գաղթականները թուով 500 են: Պոսթօնի ինչպէս և ուրիշ քաղաքի գաղթականները երեք օրջ կարգերու կարելի է բաժնել, գործաւոր, ուսանող և վաճառական: Առաջին մասը ստուար մեծամասնութիւնը կը կազմէ, և ուսանողները նուազ, իսկ վաճառականը նուազագոյն: Պոսթօնի գործաւոր հայ գաղթականները կաշիատն մասնաւորապէս կօշիկի, սոկերչութեան և երկաթի գործարաններու մէջ. իսկ ուսանողները կը գործարաններու մէջ, իսկ վաճառականները կը գործարաններու մէջ ըստական պատուաւոր դիրք մը բռնած են:

«Ուսանողները միշտ գտնելի վիճակ մը ունեցած են, որովհետև Արեւելէն եկող ուսանողներուն ամենէն սրամիտներն և յաջողակներն եղած են: Այժմ ունենք Harvard համալսարանի մէջ ուսանողներու խումբ մը ուսանող և ամենհայ, որք կուսանին ընչպէս թիւրքեր, Բրուսադիտութիւն և մտաւորական փիլիսոփայութիւն, իսկ School of Techniology-ի մէջ ալ երկրաչափութիւն ուսանող պոլկարացի հայեր:

«Սուստորի ասպարէզին վրա ունինք կարող վաճառականներ, որոնք մեծաւ մասամբ կը զբաղին արեւելեան գորգի աւետարով:

«Եւ սակայն այս ամենը չը պէտք է հրապարակ միախառնելու երեկայութիւնը: Մի քանի աջող օրինակները թով, որչափներ որոնք թշուառութեան ամեն շրջանները կանցնեն, անոք, անօգնական այստեղ գալով, հոս տեղ միտելու իրենց ուժն և խելքը, զոր կրնային այնպի օգտակարապէս գործածել իրենց երկրի մէջ»:

ԼՈՐԻ ԲՈՂՔԻՐԻ

Գլախտոնի հրաժարականից յետոյ, որպէս յայտնի է, Անգլիայի առաջին մինիստրի պաշտօնը ստանձնեց լորդ Բոլքերի, որը Գլախտոնի մինիստր

ութեան մէջ արտաքին գործերի մինիստրի պաշտօնն էր վարում: Լորդ Բոլքերի շատ նշանաւոր քաղաքագետ է և աչքի ընկնող տեղ է գրաւում ազատամիտ կուսակցութեան մէջ: Սակայն լորդ Բոլքերի պրէմիէրութեան ժամանակ մի քանի փոփոխութիւններ տեղի կունենան ազատամիտ կուսակցութեան մէջ: Լորդ Բոլքերի պատկանում է այն ազատամիտ քաղաքագետների թվին, որոնք շատ քիչ են համակրուած Գլախտոնի իրանդական օրինադին և նրա մի քանի ուրիշ արմատական ձեռնարկութիւններին: Իսկ արտաքին քաղաքականութեան մէջ լորդ Բոլքերի հետեւում էր պահպանողականների առաջնորդ մարկիզ Սուրբրի ռադիկալները: Ահա թէ ինչու դժուար է յուսալ, որ ազատամիտ մինիստրութեան նոր դուրը գնար Գլախտոնի շաղկապը: Նա աւելի համակրելի կը լինի պահպանողականների համար, քան թէ Գլախտոնը:

Եւ յիշուի, հէնց որ Գլախտոնի հրաժարականի լուրը տարածվեց և իմացվեց, որ լորդ Բոլքերին է նրան փոխարինելու, պահպանողականների ուսխտութեանը չափ չը կար: Պահպանողականները, երկի, կարծում են, որ լորդ Բոլքերի կը հրաժարվի իրանդական հարցից և կը թողնի իրանդիան իր այժմեան դրութեան մէջ:

Լորդ Բոլքերի, որպէս պետական մարդ, Գլախտոնի հակադասութեան է նա նախ և առաջ նոր քաղաքագետ, սառնասիրտ և մեծ եռանդ ունեցող մարդ է: Նա ամեն յարմարութիւններն ունի իր իշխանութեան ներքոյ պահելու ազատամիտ կուսակցութիւնը, նրա գլուխը լինելու: Բայց նա չունի Գլախտոնի իղէպական ձգտումները, չունի այն սուր կրակը, որը աղուսացնում է պետական մարդու քաղաքականութիւնը: Ահա թէ ինչու կարծում են, որ լորդ Բոլքերի մինիստրութեան ժամանակ արմատականացէ կը փոխվի անգլիական քաղաքականութիւնը:

ԶՄԻՆՈՒՄԻ ՀԱՅՈՑ ԸՆԹՅՈՒՑԱԲԱՆՆԸ

Մենք արդէն առիթ ունեցանք հաղորդելու, որ Զմիւռնիայում փետրվար ամսին տօնվելու է այն տեղի հայոց ընթերցարանի 25-ամեայ յօբելանը: Այդ տօնախմբութեան մասին այժմ Կ. Պօլսի լրագրիները հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները:

«Այնպէս կիրակի օր, իզմիրի Հուրիսեանի վարժարանին մեծ սրահը կը բացուէր հայ հասարակութեան որ հրաւիրուած էր հայ ընթերցարանի քսան և հինգ տարիի գոյութեան տարեգարծը տօնելու:

«Մասնաւորաբ մը կազմուած կար, որ աշխատած էին առ այդ գումարումին շքեղ հանդիսաւորութեան մը կերպի ու փայլը:

«Հարեւրի չափ երկի մարդիկ և երեսունի չափ կին ու օրիորդ պատասխանած էին այդ հրաւերին: Հիւրերի մէջ կը տեսնուէին առաջնորդը, Ներսէս վարդապետ Արուսեան, Մամուրեան Էֆէնտի, յոյն Արմենիալ: Լրագրին խմբագիրը, հայ-լատին Ալբերտիոս Քիւրքեան և Վիլհելմայի Միխիլաքիաններն Յովսէփ վ. Թուրքիեան: Մամուրեան էֆ. և Կ. Թուրքիեան զիտցան շատ ընկանութեամբ հանդիսականներուն խօսիլ ընթերցարանի մը օգուտներուն վրա:

«Ճշմարիտը խօսելով, ամենան երկույթ չէ սյապիսի հաստատութեան մը այս երկար գոյութիւնը որքան ալ երբեմն ընդմիջուած ըլլայ: Ամեն ոք շատ քաղցրութեամբ յիշեց հիմնադրին Գարեգին Յովսէփեանի Էֆ. Բարաբադի անունը, որ այժմ Եւրօպայի գաղտնիկուն հոն ներկայ էր իր կենդանագիրովը միայն: Շատերուն ալ սրտին ճշմարիտ հաճող մը պատճառած են Կ. Ալբերտիոս և Կ. Թուրքիեան իրենց շատ ողջամիտ գաղափարովը զոր ունեցան մասնակցելու այս հանդէսին, որու մէջ կը տօնուէր ոչ ուրիշ բան, բայց եթէ յառաջդրութեան և լուսաւորութեան գործը»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՐ

«Վիլհելմայի հեռագրում են, որ Մակեդոնիայում բողոքական դպրոցների փակման պատճառով բողոքական լրագրիները սպառնում են թիւրքաց դպրոցները փակել Բողոքիայում և ժառանգութիւնից արձակել մասնակցական պաշտօնականներին:

«Կ. Պօլսից փետրվարի 10-ից (22) «Times» լրագրին հաղորդում են հետեւալը. «Բ. Գուաբ

չափազանց վշտացած է միջազգային սանիտարական կոնգրէսի որոշումներից, որոնք ուղղած են իւրաքանչիւր տարի Մէկկա գնացող ուխտաւորների դէմ, որոնց միջոցով էլ տարածվում են տարափոխիկ հիւանդութիւնները Եւրօպայում: Օսմանեան դեղագետները հաղորդել են Բ. Գրան, որ կօնգրէսի վճիռները ի նկատի ունեն վերացնել մասնաւորապէս մի քանի նախապաշարմունքներ, և այդ պատճառով վախենում են, որ դրանք յուզումներ կարող են առաջ բերել ուխտաւորների մէջ: Սկզբում Բ. Գուաբ կամենում էր չը մասնակցել կօնգրէսին, բայց երբ նրան հաղորդեցին, թէ կօնգրէսի վճիռները, որոնք միջազգային հասարակական նշանակութիւն ունեն, կարող են ընդունվել և օսմանեան անդամների բացակայութեան դէպքում, Բ. Գուաբ հարկաւոր համարեց դեղագետներ նշանակել»:

«Լօնդոնից լրագրիներին հեռագրում են հետեւալը. «Թագուհին տնտեսութեամբ ընդունեց Գլախտոնի հրաժարականը, և շնորհակալութիւն յայտնեց նրա արդիւնաւէտ գործունէութեան համար յօգուտ պետութեան, կրկին առաջարկելով նրան պէրի կուսուր: Գլախտոն, սակայն, այս անգամ ևս մերժեց թագուհու առաջարկութիւնը և խնդրեց թագուհուն յանձնել առաջին մինիստրի պաշտօնը լորդ Բոլքերիին, որը կը զիջանի արտաքին գործերի մինիստրի պորտֆէլը լորդ Կլիւրէրէյին»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աղա-Տողաբարձ ունի Գաւառական քաղաքի օրիորդաց դպրոցում՝ դասի ժամանակն է: Աղմուկով հազարով ներս է մտնում աղա-Տողաբարձուն: Վարժուհիները և վարժապետները իրաքանցումի մէջ են:

«Հը, խօսելը, հոնց ըը, ասեց Տողաբարձուն, նստելով հնամաշ բազկաթոռի վրա»:

«Ոչինչ, լաւ ենք, պատասխանեց համեստութեամբ առաջ-վարժուհին»:

«Հա, աղիչ, լիա մէտքս ընգաւ, մին տեսակ կը օճիս զընգներս (եղունջ) կտորիս, ասեց աղա-Տողաբարձուն իր սակրացած ձեռքերը մեկնելով վարժուհուն»:

Վարժուհին վերցրեց դանակը, նստեց աղալի մօտ, և սկսեց կտրել ու մաքրել նրա եղունգները:

«* * * Եւրօպայում հարստութեան մի նշանաւոր աղբիւր ևս բանկային ձեռնարկութիւններ և բերժային խաղերն են: Բայց այդ տեսակ հարստութիւնները անհաստատ են և ստուպի պէս անհաստատ են. միակ տունը որ հաստատ մնում է այդ շրջանում—Բոտչիլիքի տունն է: Զգալով իրանց ամբողջութիւնը, Բոտչիլիքի երբեմն և մեծ անձնապատասխանութիւն են ցոյց տալիս: Երեսուհի Նաթան Բոտչիլիքի մասին հետեւալ անկերպուն են պատմում: Մի անգամ նրա մօտ դախլ է Գերմանիայի տիրող իշխաններից մինը: Նաթանը, որ այդ միջոցին մի նամակ էր գրում, զլուրով ողջունում է նրան, հրաւիրում է նստել և շարունակում է զրել: Վերաւորված իշխանը հարցնում է նրան բարկացած ձայնով.— Կուրք գիտե՞ք ես ով եմ?—Գրտեմ, պատասխանում է Բոտչիլիքը. խնդրեմ նստե՛ք աթոռի վրա:—Ես X իշխանն եմ, գտնում է այցելուն:—Շատ լաւ, ասում է Բոտչիլիքը.— ուրեմն նստե՛ք երկու աթոռի վրա»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՈՒՊՈՒԳ, 25 փետրվարի: Նոյն կայսերական Մեծութիւնները, թագաժառանգ Յէսարվիլը և կայսերական ընտանիքի այլ անձինք ներկայ էին գերմանական դեսպան գեներալ Վէրդերի մօտ եղած պարահանդիսին:

ԲԵՐԼԻՆ, 25 փետրվարի: Ռուս-գերմանական դաշնագրի նախագիծն ընդունվեց 28 անդամներից բաղկացած յանձնաժողովում 4 ձայների մեծամասնութեամբ:

ՀՌՈՄ, 25 փետրվարի: Այսօր, պարլամենտական նիստի վերջնական յետոյ, «Մոնտե-Չիտո»-ի հրապարակի վրա, պատգամաւորների ժողովի շնորհեան առջև մի ուսուր պայտից. պայտիներ լսել էր քաղաքի շատ տեղերում. պատգամաւորների ժողովի և հարեան տներում ապակիները ջարդվեցին. ապակու կտորանքներով վրաւորված են 8 հոգի, որոնցից երեքը ծանր կերպով: Պայտիների տեղի վրա նկատելի էր մեծ ծակ հողի մէջ: «Tribuna» լրագիրը կապ է գտնում պայտիների և պատգամաւորների ժողովում այսօր սկսված վիճարկութիւնների մէջ: Գե. Ֆելիչէ պատգամաւորին դատի ենթարկելու մասին:

ԼՕՆԴՈՆ, 25 փետրվարի: Պարնէլականների շքաբերականի մէջ յայտարարվում է, որ կուսակցութիւնը ոչինչ հաւատ չունի զէպի Բոլքերի և որ իրանդիայի ինքնավարութեան համար եղած բոլոր յոյսերը կորած են:

ԼՕՆԻՕՆ, 26 փետրվարի: Պետերբուրգի մեծ-բրիտանական դեսպան է նշանակված Թէրանի

